

եկեղեցին, եւ մինչեւ գմբեթին մէջ ելաւ, եւ տեսնելով թէ այդ բարձրութեամբ էլ ապահովութիւն չի կար իւր անձին՝ կը սարսռեր, կը դողար, երբ սասնցի խումբը պաշարեց գեկեղեցին, եւ մտնելով ոմանք գմբեթին մէջ եւ մերձենալով՝ մէկը նիզակով կը ռնկէն զարկաւ եւ թելին տակէն թոքերն հանելով սատակեց:

Իսկ Գուրգէն իշխան Նոյն միջոցին իւր ազգականները՝ Արծրունեաց պատանդները գտնելով, զանոնք բանտէն կը հաներ եւ ուրախութեան ու զուարճութեան օր մը այդ տիտուր օրերուն մէջ կը կատարէին սասունցիք թշնամեաց դիակաց եւ ճապաղեաց մէջ, եւ Նոցայ աւարը մէջերնին կը բաժնէին: Ուրախութիւն կը տիրեր, եւ խեղճ խութեցին արարեն դիզած աւարը մէկդի՝ Բագարատ իշխանին գինուով ոչ միայն տաքցել այլեւ թեթեւել էր: Երգերու ձայներ ամէն տեղ կը լցնէին, մինչ փոքրիկ խումբ մը մարդկան Յովնանու ազդեցութեամբ եւ վրակեցութեամբ Փրկչի եկեղեցին կը մաքրէին բարբարոսաց գարշութենէն, դիակներէն եւ արիւնէն: Եւ երկրորդ առաւօտուն եկեղեցուոյն գմբեթը կը բարձրանային փոխանակ Իւուֆի արաբացի մաղթանաց խութեցուոց սաղմոսերգութիւնք ի փառձ աստուծոյն տուողին յաղթութեան):

Նոյն օրն արեւը վճիտ երկնից վրայ կը փայլեր, եւ ձեան անդրադարձութիւն աչքերը կը շլացներ սանասնայք՝ բոլոր Մուշ քաղաքը ի խոյթ կը կրէին. Յովնան ձեռքերը ծալած այս տեսարանին կը Նայէր, եւ յանկարծ այդ արթուն մարդը անձայն իրեն մօտեցող մը իմանալով գլուխը ետին դարձուց:

– Յովնան եղբայր,– ըսաւ Գուրգէն,– դու անգո՞րծ կը կենաս երբ, աշխարհք կ'աշխատի:

– Աստուած զիս այդ աշխատութենէն պահէ, իշխան,– պատասխանեց Յովնան,– այդ բոլորն, որ կը կրեն, հայու ապրանք է. բարբարոսները ի՞նչ կը բերեն, երբ Յայաստան կ'ուզան.– իրենց սեւ երեսը, իրենց գարշ կրօնքին քարոզութիւնն ու խաբէութիւնը եւ իրենց սուրը: Բոլոր այդ աւարը Վասպուրականի եւ Տարօնի հայուն ստացուածքն է. սանասնայք իրաւունք ունին իրենց սեփականելու,